# ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

## «ԵՐՎԱՆԴ ՄԱՆԱՐՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 10 ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

Մ-09/6557-16
07.12.16թ

# I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

<Երվանդ Մանարյան> փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է [illegible].03.1998թ.:

Կազմակերպության գրանցման վկայականի համարն է 03Ա1019477:

## 1.1. Կազմակերպության նպատակները և խնդիրները

**<Երվանդ Մանարյան> փակ բաժնետիրական ընկերության նպատակներն ու խնդիրներն են.**

1. վերաբացել վաստակաշատ ու սիրված արտիստ Երվանդ Մանարյանի [illegible] և շուրջ 30 տարի գոյատևած <ԱԳՈՒԼԻՍ> մանկական թատրոնը, որն [illegible] 1 տարուց ավել չի գործում,
2. նպաստել մանուկների ու երեխաների գեղարվեստական կրթությանն [illegible] գեղագիտական դաստիարակությանը, հայրենասիրական ոգու [illegible]ացմանը,
3. աշխուժացնելու մանկապատանեկան մշակութային կյանքը և այլն:

## 1.2. Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

<Երվանդ Մանարյան> ՓԲ ընկերությունն իր գործունեության ընթացքում [illegible]վարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ,

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, <Փակ բաժնետիրական ընկերությունների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով, <Երվանդ Մանարյան> ՓԲ ընկերության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

<Երվանդ Մանարյան> ՓԲ ընկերության աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**1.3 Կազմակերպությունում առկա մարդկային ռեսուրսներն են.**

1. <Երվանդ Մանարյան> ՓԲԸ-ի նախագահ 100% բաժնետոմսերի բաժնետեր Քրիստ Մանարյանը,

Հասարակական հիունքներով.

1. Նունե Մանուչարյանը,

2. Լիլիթ Մանարյանը:

**1.4. Կազմակերպության գործունեության ոլորտը**

<Երվանդ Մանարյան> փակ բաժնետիրական ընկերության գործունեության ոլորտներն են.

1. մշակութային կյանք,
2. արվեստ,
3. գեղարվեստական դաստիարակություն,
4. կրթություն,
5. հայրենասիրություն,

6. ՀՀ օրենսդրությամբ և ընկերության կանոնադրությամբ չարգելված այլ ոլորտներ:

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

### 2.1. Ծրագրի նպատակը

Ծրագրի իրականացման նպատակն է վերաբացել վաստակաշատ ու սիրված արտիստ Երվանդ Մանարյանի ստեղծած և շուրջ 30 տարի գոյատևած <ԱԳՈՒԼԻՍ> մանկական թատրոնը, թատերական ներկայացումների, մշակութային ժամանցի միջոցով նպաստել ազգային և համամարդկային արժեքների ստեղծմանը, զբաղվել մանուկների գեղագիտական դաստիարակությամբ, ինչպես նաև բարձրացնել մանուկների հայրենասիրական ոգին:

### 2.1. Ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարում <Երվանդ Մանարյան> փակ բաժնետիրական ընկերության գործունեության կազմակերպման համար ֆինանսական աղբյուրներ են հանդիսանում <ԱԳՈՒԼԻՍ> մանկական թատրոնի գործունեության արդյունքում ձեռք բերված, ինպես նաև օրենքով չարգելված այլ միջոցները:

### 2.2. Ծրագրի իրականացման ժամկետները

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 10 տարում:

## 2.3. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 10 տարում <Երվանդ Մանարյան> փակ բաժնետիրական ընկերությունը նախատեսում է կազմակերպել ներկայացումներ, շոուներ, համերգներ և այլ մշակութային միջոցառումներ, երեխաների համար կազմակերպել արվեստի դասընթաներ և ալն:

## 2.4. Ծրագրի իրականացման ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրի միջոցառումների իրականացման արդյունքում <Երվանդ Մանարյան> փակ բաժնետիրական ընկերությունը ակնկալում է վերանորոգել <ԱԳՈՒԼԻՍ> մանկական թատրոնի կողմից նախկինում զբաղեցրած տարածքը և վերաբացել <ԱԳՈՒԼԻՍ> մանկական թատրոնը, զբաղվել երեխաների գեղագիտական դաստիարակությամբ, մանուկների մոտ արթնացներ սեր դեպի արվեստը, ինչպես նաև բարձրացնել հայրենասիրական ոգին:

# III.ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Երևան քաղաքի Աբովյան 29 հասցեում գտնվող <ԱԳՈՒԼԻՍ> մանկական թատրոնի կողմից նախկինում զբաղեցրած նկուղային տարածքը <Երվանդ Մանարյան> փակ բաժնետիրական ընկերությանը 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքում ընկերությունը պարտավորվում է 5 /հինգ/ տարվա ընթացքում տարածքի բարելավման նպատակով կատարել 1 մլն. ՀՀ դրամի ներդրում, յուրաքանչյուր տարի 200 000 ՀՀ դրամի չափով, համաձայն ստորև ներկայացված ժամանակացույցի.

**1-ին տարում՝** վերացնել տարածքում առկա խոնավությունը, կարգի բերելով /վերանորոգելով/ պատերն ու հատակը,

**2-րդ տարում՝** տեղադրել օդորակիչ /կոնդիցիոներ/՝ ձմռանն ու ամռանը հանդիսատեսի համար տանելի ջերմություն ապահովելու համար,

**3-րդ տարում՝** վերանորոգել ու կարգի բերել բեմը /տիկնիկային թատրոնի ստանդարտներին համապատասխան/,

**4-րդ տարում՝** վերանորոգել ու գործածության համար հարմար դարձնել կոյուղին /սան.հանգույցը/, որից օգտվում են թե թատրոնի անձնակազմը, և թե հանդիսատեսը,

**5-րդ տարում՝** վերանորոգել դռները, որպեսզի հնարավոր լինի թատրոնին պատկանող գույքը պահպանել անվնաս:

***<Երվանդ Մանարյան> ՓԲԸ-ի տնօրեն՝*** ***Քրիստ Մանարյան***